



Բանկերի ընդհանուր կապիտալի
նվազագույն սահմանաչափի
համեմատական վերլուծություն ԱՊՀ
և Արևելյան Եվրոպայի երկրներում
ՀՀ վարկային կազմակերպությունների
միություն



Երևան, 2015

Ներածություն

Համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) մամլո հաղորդագրության¹՝ 2014 թ. -ի դեկտեմբերի 30-ին ԿԲ-ի Խորհուրդը որոշեց, սկսած 2017 թ. -ի հունվարի 1-ից, բարձրացնել բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափը 5 մլրդ ՀՀ դրամից մինչև 30 մլրդ ՀՀ դրամ: Այս փոփոխությունը նպատակաուղղված է բանկերի միաձուլումներին, որը կխթանի բանկային համակարգում ավելի լավ բանկային ծառայությունների մատուցմանը և առողջ մրցակցային միջավայրի ձևավորմանը: ՀՀԿԲ-ն նշում է այս որոշման օգուտները.

- Այն կհանգեցնի ՀՀ բանկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը և կայունության ամրապնդմանը:
- Այն բարենպաստ միջավայր կստեղծի նոր տեխնոլոգիաների և պրոդուկտների ներդրման համար՝ բարձրացնելով ՀՀ բանկային համակարգի գրավչությունը կապիտալի միջազգային շուկաների մասնակիցների շրջանում՝ հիմք ստեղծելով հարաբերությունների հետագա խորացման համար:
- Այն կբարձրացնի բանկային համակարգի՝ տնտեսական տարբեր իրավիճակներում շուկերին դիմակայելու ունակությունը և ճկունությունը, ինչպես նաև կնպաստի ֆինանսական միջնորդության խորացմանը:

Ոչ պաշտոնական հայտարարություններում բազմիցս ընդգծվել է, որ 21 բանկերը շատ են Հայաստանի նման երկրի համար, որի բնակչությունը մոտ 3 միլիոն մարդ է:

Այլ երկրների հետ համեմատականներ

Սույն վերլուծության մեջ օգտագործվել են նախկին ԽՍՀՄ և Արևելյան Եվրոպայի զարգացող երկրների մի քանի տնտեսական ցուցանիշներ: Ընտրվել են 10 նախկին ԽՍՀՄ և 10 Արևելյան Եվրոպայի զարգացող երկրներ: Տվյալների բազան ընդգրկում է հետևյալ տնտեսական ցուցանիշները. յուրաքանչյուր երկրի բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափը, բանկերի թվաքանակը (2014), բնակչությունը (2014), ընդհանուր բանկային ակտիվները (2013), ՀՆԱ-ն (2013) և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն (2013):

Տվյալների ձեռքբերման հիմնական աղբյուրներն են եղել

- ՀՀ ԿԲ-ն,
- Յուրաքանչյուր երկրի կենտրոնական կամ ազգային բանկերը,

¹<https://www.cba.am/AM/pmessagesannouncements/Reg%202%2030%20bln%2030.12.2014.pdf>

- Համաշխարհային բանկը,
- Macro Economy Meter (MECOMeter).


Աղյուսակ 1-ը ցույց է տալիս բանկային համակարգի և տնտեսության մի քանի կարևոր ցուցանիշներ ընտրված երկրների համար: Ընտրված բոլոր երկրներից բանկերի ամենամեծ քանակն ունի Ռուսաստանը՝ 980 բանկ, իսկ ամենափոքր քանակը՝ Մոնտենեգրոն՝ 12 բանկ: Հայաստանն ունի 21 բանկ և այս ցուցակում գերազանցում է 7 երկրների: Ընդհանուր բանկային ակտիվների ամենաբարձր մակարդակը 2013 թ. -ին ուներ Ռուսաստանը՝ \$ 1,722 մլրդ, իսկ ամենափոքրը՝ Տաջիկստանը՝ \$ 2.7 մլրդ, որը ներկայումս ունի 17 բանկ: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 2013 թ. -ին ամենամեծն էր Սլովենիայում՝ \$ 23,290, իսկ ամենացածրը եղել է Տաջիկստանում՝ \$ 1036:

Աղյուսակ 1: Բանկային համակարգի և տնտեսության կարևոր ցուցանիշներ՝ ընտրված երկրների համար

Երկիր	Բանկերի քանակ	Բնակչություն (հազ. մարդ)	Ընդհանուր բանկային ակտիվներ, 2013թ. (\$ մլրդ)	ՀՆԱ, 2013թ. (\$ մլրդ)	Մեկ շնչի հաշվով ՀՆԱ, 2013թ. (\$)
Ադրբեջան	44	9,541	25.5	7,812	74
Ալբանիա	16	3,188	12.6	4,660	13
Բելառուս	31	9,358	41.6	7,576	72
Բոսնիա և Հերցեգովինա	27	3,835	15.5	4,662	18
Բուլղարիա	27	7,131	60.3	7,500	55
Էստոնիա	15	1,309	27.1	18,783	25
Խորվաթիա	36	4,258	72.9	13,610	58
Հայաստան	21	2,975	7.3	3,505	10
Ղազախստան	38	17,000	98.4	13,610	232
Մակեդոնիա	15	2,122	8.5	4,840	10
Մոլդովա	14	3,600	5.9	2,240	8
Մոնտենեգրո	12	608	4.1	7,110	4
Չեխիա	58	10,472	267.3	19,845	209
Ռուսաստան	980	146,280	1,722	14,612	2,097
Սերբիա	29	7,120	37.9	6,354	46
Սլովակիա	29	5,427	84	18,050	98
Սլովենիա	24	2,047	61.5	23,290	48
Վրաստան	20	4,446	9.9	3,605	16
Տաջիկստան	17	8,474	2.7	1,037	9
Ուկրաինա	181	42,753	155.3	3,900	177


Համաձայն Գծապատկեր 1-ի՝ բանկերի կապիտալի ամենացածր նվազագույն սահմանաչափն ունի Խորվաթիան, որը կազմում է \$ 3 մլն, իսկ ամենաբարձրը՝ Էստոնիան, որը հավասար է \$ 116 մլն:

Հայաստանի բանկերի կապիտալի նվազագույն սահմանաչափը կազմում է \$ 63 մլն, որն ընտրված երկրների ցուցակում երրորդն է Էստոնիայից (\$ 116 մլն) և Ադրբեջանից (\$ 64 մլն) հետո:



Գծապատկեր1: Բանկերի կապիտալի նվազագույն սահմանաչափը տարբեր երկրներում

Գծապատկեր 2-ը ցույց է տալիս մեկ միլիոն մարդու հաշվով բանկերի քանակն ընտրված երկրներում: Ըստ գծապատկերի՝ մեկ միլիոն մարդու հաշվով բանկերի ամենամեծ քանակն ունի Մոնտենեգրոն, որը հավասար է 19.7 բանկ, իսկ ամենացածրը՝ Տաջիկստանը՝ 2 բանկ մեկ միլիոն մարդու հաշվով: Հայաստանը ցուցակում 6-րդն է՝ մեկ միլիոն մարդու հաշվով 7.1 բանկ: Այն հաջորդում է Մոնտենեգրոյին (19.7), Սլովենիային (11.7), Էստոնիային (11.5), Խորվաթիային (8.5) և Մակեդոնիային (7.1): Մեկ միլիոն մարդու հաշվով բանկերի քանակը Ռուսաստանում կազմում է 6.7, Ադրբեջանում՝ 4.6 և Վրաստանում՝ 4.5:



Գծապատկեր 2: Մեկ միլիոն մարդու հաշվով բանկերի քանակի համեմատություն տարբեր երկրներում

Եզրակացություն

Մեկ միլիոն մարդու հաշվով բանկերի քանակը Հայաստանում կազմում է 7 բանկ, որը 6-րդ արդյունքն է 20 երկրների ցուցակում: Հայաստանից առաջ են այնպիսի երկրներ, ինչպիսիք են Մոնտենեգրոն, Սլովենիան, Էստոնիան, Խորվաթիան և Մակեդոնիան, որոնցից 4-ը Արևելյան Եվրոպայի զարգացող երկրներ են: 6 Արևելաեվրոպական զարգացող երկրներ և 8 ԱՊՀ երկրներ ունեն ավելի քիչ բանկերի քանակ մեկ միլիոն մարդու հաշվով, քան Հայաստանը: Լինելով 3-րդը ընդհանուր բանկային ակտիվների արժեքով (\$7.3 մլրդ) 20 երկրների ցուցակում, և ունենալով 2-րդ ամենացածր մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն (միայն Տաջիկստանն ունի ավելի ցածր ՀՆԱ)՝ Հայաստանը սահմանում է բանկերի կապիտալի նվազագույն սահմանաչափը \$ 63 մլն, որն իր հերթին 3-րդն է ցուցակում Էստոնիայից և Ադրբեյջանից հետո:

Հաշվի առնելով ընդհանուր բանկային ակտիվների արժեքը, տնտեսության մեծությունը և բնակչության թվաքանակը՝ Հայաստանն ունի բանկերի կապիտալի ամենամեծ նվազագույն սահմանաչափերից մեկը: Եթե համեմատում ենք զարգացող երկրների հետ, փաստորեն, ՀՀ ԿԲ-ի կողմից առաջ քաշված հիմնավորումները միանշանակ չեն: Եթե ՀՀ ԿԲ-ի՝ բանկերի կապիտալի նվազագույն սահմանաչափը \$ 63 մլն սահմանելու հիմնավորումը ճիշտ է, ապա ստացվում է, որ մնացած այլ երկրներում, որոնք ունեն բանկերի կապիտալի ավելի ցածր նվազագույն սահմանաչափ, բանկային համակարգը արդյունավետ չէ:

Համեմատելով բանկային համակարգի մեծությունը (ընդհանուր բանկային ակտիվներ) և տնտեսության մեծությունը (ՀՆԱ, մեկ շնչի հաշվով ՀՆԱ) բանկերի կապիտալի նվազագույն սահմանաչափի հետ՝ Հայաստանն ունի բանկերի կապիտալի շատ բարձր նվազագույն սահմանաչափ, որը որևէ կերպ հիմնավորված չէ նման փոքր տնտեսություն ունենալու պարագայում: